

**«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿ-ԳՀԾՁԲ-26/01**

ք. Երևան

«02» 02 2026թ.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս խորհրդի նախագահ **Լ. Հովհաննիսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՌԻԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի**, որը գործում է Ընկերություն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **աուդիտորական ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **900 000 (ինը հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:¹

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների

4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ

ք. Երևան, Արմյան փող. 2. 27

ՀՎՀՀ 01544167

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300006000150100

Լ. Հովհաննիսյան



Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՌԻԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ք. Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12

ՀՎՀՀ 01569467

Արդշինբանկ» ՓԲԸ, "Կոմիտաս" մ/ճ

Հ/Հ 2474703639760000

Ա.Ավետիսյան



Կ.Տ

Հավելված N 1

«02» 02 2026թ. կնքված

ՀԿ-ԳՀԾՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	79211150	Ներկայացված է Հավելված 1.1-ում	1	900 000	1	ՀՀ, ք. Երևան, Արուսյան 27, 3-րդ հարկ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	Ծառայության մատուցման ժամկետը ոչ ուշ, քան 01.05.2026թ.

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ

ք. Երևան, Արուսյան փող. 2, 27

ՀՎՀՀ 01544167

«Կոնվերս քանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930000600150100

Լ. Հովհաննիսյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՌՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ք. Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12

ՀՎՀՀ 01569467

Արդշինքանկ» ՓԲԸ, "Կոմիտաս" մ/ճ

Հ/Հ 2474703639760000

Ա.Ավետիսյան



« 02 » 02 2026թ. կնքված

ՀԿ-ԳՀԾՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր
2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն)
Ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայության գնման

1. Նպատակը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին թույլ տալ կարծիք հայտնել ըստ Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակվող Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) հիման վրա կազմված «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ըստ ՀՀՄՍ 1-ի ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է հետևյալ բաղադրիչները.

- (ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ տարվա վերջի դրությամբ,
 - (բ) Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,
 - (գ) Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,
 - (դ) Դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար
 - (ե) Ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից
 - (զ) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ համադրելի ամենամիտ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, երբ կազմակերպությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառում է հետընթաց, կամ կատարում է ֆինանսական հաշվետվությունների հոդվածների հետընթաց վերահաշվարկ, կամ երբ վերադասակարգում է նախկին հաշվետվությունների հոդվածները:
- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահական գրանցումները հանդիսանում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմք և կատարվում են ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պատասխանատվությունը

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Սա ներառում է բավարար հաշվապահական գրառումների պահպանումը և ներքին հսկողության ապահովումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառությունը և ծրագրի ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս՝ աուդիտորները ղեկավարությունից պետք է ստանան աուդիտի իրականացման փաստի գրավոր հաստատում:

3. Ծառայությունների ծավալը

Աուդիտը կիրականացվի համաձայն Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) աուդիտի և հավաստիացման ստանդարտների միջազգային խորհրդի հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ): Այդ ստանդարտները պահանջում են, որպեսզի աուդիտորն աուդիտը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ստացվի

բավարար հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները գուրկ են նշանակալի անճշտություններից: Աուդիտի ընթացքում ընտրանքային եղանակով ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն ու բացահայտումները հիմնավորող փաստերը: Աուդիտը ներառում է նաև օգտագործված հաշվապահական սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատականների գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

ԱՄՄ-ին համապատասխանությունն ապահովելու ընթացքում աուդիտորը հատկապես պետք է ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին, ներառյալ պետական ոլորտի մարմիններին վերաբերվող հատուկ նկատառումները.

ա) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 240-ի (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ խարդախության ղեպերի հետ կապված աուդիտորի պարտականությունները)՝ աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում աուդիտի ռիսկը մինչև ընդունելի մակարդակը նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է հաշվի առնի խարդախության պատճառով ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած նշանակալից անճշտությունների ռիսկերը:

բ) Աուդիտի միջազգային ստանդարտ 250-ի (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ օրենքների և օրենսդրական դաշտի պահանջների կատարումը)՝ աուդիտի գործընթացի պլանավորման և իրականացման, ինչպես նաև արդյունքների գնահատման և ներկայացման ժամանակ աուդիտորը պետք է հաշվի առնի, որ կառույցի կողմից օրենքների և կարգավորման դաշտի պահանջների չկատարումը կարող է էապես ազդել ֆինանսական հաշվետվության վրա:

գ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 260-ի (Ընկերության կառավարման համար պատասխանատուներին աուդիտի հետ կապված խնդիրների մասին հաղորդումը)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ընկերության կառավարման մարմնին պետք տեղեկացնի կառավարչական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մասին:

դ) Աուդիտի միջազգային ստանդարտ 265-ի (Ընկերության կառավարման համար պատասխանատուներին ներքին հսկողության բացթողումների մասին տեղեկացում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ներքին հսկողության հայտնաբերված թերությունների մասին պետք է պատշաճ կերպով տեղեկացնի կառավարման և ղեկավարման համապատասխանատուներին:

ե) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 330-ի (Աուդիտորի ընթացակարգերը գնահատված ռիսկերին արձագանքելիս)՝ Աուդիտի ռիսկն ընդունելի մակարդակի նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է որոշի իր արձագանքը ֆինանսական հաշվետվությունների մակարդակով գնահատված ռիսկերի նկատմամբ և պնդումների մակարդակով գնահատված ռիսկերին արձագանքելու նպատակով մշակի և իրականացնի աուդիտի լրացուցիչ ընթացակարգեր:

զ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 402-ի (Աուդիտի նկատառումները ծառայություններ մատուցող ընկերությունն ներգրաված կառույցի վերաբերյալ)՝ այն ղեպերում, երբ տվյալ կառույցի գործառնությունների մի մասն իրականացնում է ծառայություններ մատուցող երրորդ կողմը, ապա աուդիտորը աուդիտի գործընթացի ժամանակ պետք է ներառի ծառայություններ մատուցող ընկերության ներքին հսկողության միջավայրին վերաբերվող նկատառումներ և գնահատականներ:

է) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 580-ի (գրավոր ներկայացում)՝ որպես աուդիտի գործընթացի բաղկացուցիչ՝ աուդիտորը ընկերության ղեկավարությունից կամ, համապատասխան ղեպերում կառավարող մարմնից պետք է ստանա աուդիտի փաստն արձանագրող նամակ:

4. Անկախ աուդիտորի եզրակացությունը

Աուդիտորը 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ պետք է աուդիտորական կարծիք ներկայացնի՝ նշելով, թե արդյոք այդ ֆինանսական հաշվետվություններն ըստ Հաշվապահան միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների, ապահովում են Ընկերության ֆինանսական վիճակի

և գործունեության արդյունքների վերաբերյալ ճշմարիտ պատկերը 31.12.2025թվականին ավարտված ֆինանսական տարվա դրությամբ:

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ աուդիտորի կարծիքը, պետք է տրամադրվեն ոչ ուշ, քան մինչև 2026թ մայիսի 1-ը:

5. Այլ պայմաններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և պատշաճ հրապարակման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը:

Աուդիտորի համար պետք է առանց սահմանափակումների հասանելի լինի ամբողջ տեղեկատվությունը և աուդիտորին տրամադրվեն աուդիտի իրականացմանը նպաստող բոլոր պարզաբանումները:

Մասնակիցը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ մատուցելու լիցենզիա:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ

ք. Երևան, Արմյան փող. 2. 27

ՀՎՀՀ 01544167

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930000600150100

Լ. Հովհաննիսյան



«ԱՌԻԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ք. Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12

ՀՎՀՀ 01569467

Արդշինբանկ» ՓԲԸ, "Կոմիտաս" մ/ճ

Հ/Հ 2474703639760000

Ա.Ավետիսյան



Հավելված N 2

« 02 » 02 2026թ. կնքված

ՀԿ-ԳՀԾՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ եռամսյակների				
			1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	Ընդամենը
1	79211150	առուդիտորական ծառայություն	900000	900000	900000	900000	900 000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
 ք. Երևան, Արուսյան փող. 2. 27
 ՀՎՀՀ 01544167
 «Կոնվերս քանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930000600150100



Կ.Տ

«ԱՌԻԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
 ք. Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12
 ՀՎՀՀ 01569467
 Արդշինբանկ» ՓԲԸ, "Կոմիտաս" մ/ճ
 Հ/Հ 2474703639760000



Ա.Ավետիսյան